3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

(368-րդ հոդվածը խմբ., փոփ. 28.11.07 ՀՕ-275-Ն, լրաց., փոփ. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 368.1. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգությունն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը

1. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգությունն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը հասարակական կարգի պահպանության կամ հասարակական անվտանգության ապահովման վերակարգի մեջ մտնող զինծառայողի կողմից, եթե այդ արարքն էական վնաս է պատճառել քաղաքացիների իրավունքներին ու օրինական շահերին՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են արտակարգ դրության, ռազմական դրության պայմաններում կամ պատերազմի ժամանակ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:

(368.1-ին հոդվածը լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 369. Ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. Չենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

(369-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-119-Ն, 28.11.07 ՀՕ-275-Ն, լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 370. Ռազմական գույքն անգգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը

Չենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքն ինքնավստահությամբ կամ անփութությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

(370-րդ հոդվածը փոփ. 28.11.07 ՀՕ-275-Ն, լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 371. Ռազմական գույքը յուրացնելը կամ վատնելը (վերնագիրը խմբ. 30.04.13 ՀՕ-34-Ն)

1. Չինծառայողին անձնական կամ ծառայողական օգտագործման համար տրամադրված

համազգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկաները կամ ռազմական այլ գույքը յուրացնելը կամ վատնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Չենքը կամ ռազմամթերքը յուրացնելը կամ վատնելը՝

պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրույթան, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:

(371-րդ հոդվածը փոփ. 28.11.07 ՀՕ-275-Ն, խմբ. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 372. Ռազմական գույքը կորցնելը կամ փչացնելը

1. Չինձառայողի կողմից անձնական օգտագործման համար իրեն տրամադրված զգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկաները զգալի չափերով, ինչպես նաև ծառայողական օգտագործման համար իրեն վստահված զենքը, ռազմամթերքը կամ ռազմական այլ գույքը կորցնելը կամ փչացնելը, որը կատարվել է դրանց պահպանության կանոնների խախտմամբ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ռազմական դրույթան, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածում զգալի չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

(372-րդ հոդվածը խմբ., փոփ. 28.11.07 ՀՕ-275-Ն, խմբ., լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 373. Չենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը

1. Չենքի, ռազմամթերքի, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգոգուշությամբ պատճառել է թեթև կամ միջին ծանրության վնաս՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը մարդու առողջությանն անգոգուշությամբ պատճառել է ծանր վնաս կամ առաջացրել է ռազմական տեխնիկայի ոչնչացում կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որն անգոգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն անգոգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով:

(373-րդ հոդվածը փոփ. 28.11.07 ՀՕ-275-Ն, լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 374. Չենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը

Չինձառայողին վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերը, պայթուցիկ կամ շրջապատի համար մեծ վտանգ ներկայացնող այլ սարքերը և առարկաները սահմանված կարգի խախտմամբ մեկ ուրիշին հանձնելը, եթե դա առաջացրել է մարդկային զոհեր կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(374-րդ հոդվածը փոփ., լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 375. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը

1. Պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ

պաշտոնական դիրքը չարաչափելը, իշխանազանցությունը կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք անգգուշությամբ նյութական ծանր հետևանքներ են առաջացրել՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավումով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք նյութական ծանր հետևանքներ են առաջացրել՝

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավումով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասներեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավումով կամ առանց դրա:

(375-րդ հոդվածը լրաց. 09.06.04 ՀՕ-97-Ն, խմբ. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 376. Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ

1. Ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որը պատճառել է էական վնաս՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքները, եթե անգգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, եթե դրանք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

(376-րդ հոդվածը լրաց. 09.06.04 ՀՕ-97-Ն, լրաց., փոփ. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 377. Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը

1. Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգգուշությամբ պատճառել է միջին ծանրության կամ ծանր վնաս կամ առաջացրել է այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:

(377-րդ հոդվածը փոփ. 28.11.07 ՀՕ-275-Ն, լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 378. Թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը

1. Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման այլ կանոնները խախտելը, որն անգգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, եթե դրանք անգգուշությամբ առաջացրել են երկու կամ ավելի մարդու մահ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:

Հոդված 379. Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը

Պետի (հրամանատարի) կողմից առանց մարտի պարագաներով հարկադրված լինելու՝ ամրությունները, մարտական տեխնիկան և մարտ վարելու այլ միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

(379-րդ հոդվածը լրաց. 30.04.13 ՀՕ-34-Ն)

Հոդված 380. Մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը

1. Մարտի ժամանակ մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:
2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 381. Կամովին գերի հանձնվելը

Վախկոտության կամ փոքրագույն պատճառով կամովին գերի հանձնվելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 382. Հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից

1. Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից ռազմական նշանակություն ունեցող աշխատանքներին կամ այնպիսի այլ միջոցառումներին կամովին մասնակցելը, որոնք ակնհայտ կերպով կարող են վնաս պատճառել Հայաստանի Հանրապետությանը կամ նրա դաշնակից պետություններին, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:
2. Մյուս ռազմագերիների նկատմամբ բռնություն գործադրելը կամ ավագի դիրքում գտնվող ռազմագերու կողմից նրանց հետ դաժանորեն վարվելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից ութ տարի ժամկետով:
3. Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից շահադիտական դրդումներով կամ իր նկատմամբ հակառակորդի ներողամիտ վերաբերմունքն ապահովելու նպատակով այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ուղղված են մյուս ռազմագերիների դեմ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
(382-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն)

Հոդված 383. Դիակապությունը

Մարտադաշտում սպանվածների կամ վիրավորների մոտ գտնվող իրերը հափշտակելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից ութ տարի ժամկետով:

Բ Ա Ժ Ի Ն 13

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 33

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 384. Ագրեսիվ պատերազմը

1. Ագրեսիվ պատերազմ ծրագրելը կամ նախապատրաստելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով:
2. Ագրեսիվ պատերազմ սանձազերծելը կամ վարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով:
(384-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-143-Ն)

Հոդված 385. Ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչերը

1. Ագրեսիվ պատերազմ սանձազերծելու հրապարակային կոչերը՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Նույն գործողությունները, որոնք կատարվել են զանգվածային լրատվության միջոցներով կամ բարձրագույն պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
3. Սույն հոդվածում բարձրագույն պետական պաշտոն զբաղեցնող անձինք են Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները:

Հոդված 386. Չանգվածային ոչնչացման զենք արտադրելը կամ տարածելը

Քիմիական, կենսաբանական կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը կամ իրացնելը, միջուկային զենքի չտիրապետող պետությանը հումքային կամ հատուկ տրոհվող նյութեր հանձնելը,

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենք կամ դրա արտադրության համար անհրաժեշտ բաղադրամասեր տրամադրելը՝ պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 387. Պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը

1. Ռազմական գործողություններում կամ զինված ընդհարումներում միջազգային պայմանագրով արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը քսան տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենք կիրառելը կամ փորձարկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

(387-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-143-Ն)

Հոդված 388. Ահաբեկչական գործողությունն օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի դեմ

1. Օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի դեմ բռնություն գործադրելը կամ նրան առևանգելը կամ ազատությունից զրկելը, եթե այդ գործողությունները կատարվել են պատերազմի պրովոկացիայի կամ միջազգային հարաբերությունները բարդացնելու նպատակով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից տասներկու տարի ժամկետով:

2. Օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի սպանությունը, եթե դա կատարվել է պատերազմի պրովոկացիայի կամ միջազգային հարաբերությունները բարդացնելու նպատակով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

(388-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-143-Ն)

Հոդված 389. Միջազգային ահաբեկչությունը

Միջազգային ահաբեկչությունը՝ միջազգային բարդություններ կամ պատերազմ հրահրելու կամ օտար պետության ներքին վիճակն ապակայունացնելու նպատակով օտարերկրյա պետության տարածքում պայթյունի կամ հրկիզման կամ այլ գործողությունների կազմակերպումը կամ իրականացումը, որն ուղղված է մարդկանց ոչնչացնելուն կամ նրանց մարմնական վնասվածքներ պատճառելուն, շիջություններ, կառույցներ, ճանապարհներ և հաղորդակցության միջոցներ, կապի միջոցներ կամ այլ գույք ոչնչացնելուն կամ վնասելուն՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

(389-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-143-Ն)

Հոդված 390. Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ

1. Չինված ընդհարումների ժամանակ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող կամ պաշտպանության միջոցներից զրկված անձանց, վիրավորների, հիվանդների, բժշկական կամ հոգևոր անձնակազմի, սանիտարական գործակալների կամ սանիտարական տրանսպորտային միջոցների, ռազմագերիների, քաղաքացիական անձանց, քաղաքացիական բնակչության, փախստականների, հովանավորվող անձանց կամ ռազմական գործողությունների ժամանակ պաշտպանությունից օգտվող այլ անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքները կատարելը՝

1) սպանությունը,
2) խոշտանգումները և անմարդկային վերաբերմունքը, ներառյալ՝ կենսաբանական փորձերը,
3) դիտավորյալ լուրջ տառապանք պատճառելը կամ անձի ֆիզիկական կամ հոգեկան վիճակին սպառնացող այլ գործողություններ կատարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

2. Չինված ընդհարումների ժամանակ սույն հոդվածի առաջին մասում թվարկված անձանց կամ օբյեկտների նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքները կատարելը՝

1) առողջությանը վնաս պատճառելը,
2) հովանավորվող անձին կամ ռազմագերուն հակառակորդ տերության զինված ուժերում ծառայելուն հարկադրելը,
3) հովանավորվող անձին կամ ռազմագերուն անաչառ և պատշաճ դատավարության իրավունքից զրկելը,
4) հովանավորվող անձի անօրինական բռնազաղթը, տեղափոխելը և կալանավորումը կամ այլ ձևով ազատությունից զրկելը,
5) պատանդ վերցնելը,
6) գույքն անօրինական, կամայական, մեծ չափերով ոչնչացնելը կամ յուրացնելը, որը

պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասներկու տարի ժամկետով:

3. Չինված ընդհարումների ժամանակ անձի ֆիզիկական կամ հոգեկան վիճակին լուրջ վնաս պատճառած կամ մարդու մահ առաջացրած միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքները՝

1) քաղաքացիական բնակչության կամ առանձին քաղաքացիական անձանց վրա հարձակումը,

2) ոչ ընտրովի բնույթի հարձակումը, որը վնասում է քաղաքացիական բնակչությանը կամ քաղաքացիական օբյեկտներին, եթե ակնհայտ է, որ նման հարձակումը կհանգեցնի չափազանց մեծ կորուստների քաղաքացիական անձանց շրջանում կամ չափազանց մեծ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին, եթե այդպիսի վնասներ պատճառելը չափազանց է՝ կոնկրետ և անմիջական ռազմական գերազանցության հասնելու համար,

3) վտանգավոր ուժեր պարունակող կառույցների և սարքավորումների վրա հարձակվելը, եթե ակնհայտ է, որ այդպիսի հարձակումը կհանգեցնի չափազանց մեծ կորուստների քաղաքացիական անձանց շրջանում կամ չափազանց մեծ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին, եթե այդպիսի վնասներ պատճառելը չափազանց է՝ կոնկրետ և անմիջական ռազմական գերազանցության հասնելու համար,

4) չպաշտպանվող տարածքները և ապառազմականացված գոտիները հարձակման օբյեկտ դարձնելը,

5) հարձակումն այն անձի վրա, ով հանցավորի համար ակնհայտ, դադարեցրել է անմիջական մասնակցությունը ռազմական գործողություններին՝

պատժվում են ազատազրկմամբ՝ տասներեքից քսան տարի ժամկետով, կամ ցմախ ազատազրկմամբ:

4. Չինված ընդհարումների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքները՝

1) բռնազավթող պետության կողմից իր սեփական քաղաքացիական բնակչության մի մասի վերաբնակեցումը բռնազավթված տարածքում, կամ բռնազավթված տարածքի ամբողջ բնակչության կամ դրա մի մասի տեղահանումը կամ տեղափոխումը բռնազավթված տարածքի սահմաններում կամ դրանից դուրս,

2) ռազմագերիների կամ քաղաքացիական անձանց հայրենադարձության չարդարացված ձգձգումը,

3) ապարտեիդի կամ ռասայական խտրականության վրա հիմնված, անձի արժանապատվությունը ստորացնող, ոչ մարդասիրական և նվաստացնող այլ գործողությունների պրակտիկայի կիրառումը,

4) հատուկ պաշտպանության տակ գտնվող, հստակ տարրոռչված, ժողովուրդների մշակութային և հոգևոր ժառանգություն համարվող պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը հարձակման օբյեկտ դարձնելը և հարձակման հետևանքով դրանց մեծ վնաս պատճառելը, եթե դրանք չեն գտնվում ռազմական օբյեկտների անմիջական հարևանությամբ, և եթե տվյալներ չկան այդ պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը հակառակորդի կողմից ռազմական գործողություններին նպաստելու համար օգտագործելու մասին՝

պատժվում են ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

5. Չինված ընդհարումների ժամանակ հակառակորդի իշխանության տակ գտնվող, կալանավորված կամ այլ ձևով ազատությունից զրկված անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտում համարվող և նրանց առողջությանը, ֆիզիկական կամ հոգեկան վիճակին սպառնացող բժշկական միջամտությունը, որը պայմանավորված չէ նշված անձանց առողջական վիճակով և չի համապատասխանում համընդհանուր ճանաչում ստացած բժշկական նորմերին, մասնավորապես, նույնիսկ նշված անձանց համաձայնությամբ նրանց ֆիզիկական խեղում պատճառելը, նրանց նկատմամբ բժշկական կամ գիտական փորձեր իրականացնելը, մարմնի մասեր կամ հյուսվածքներ հեռացնելը կամ փոխպատվաստման վիրահատություն կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

6. Չինված ընդհարումների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի միջազգային պայմանագրերով նախատեսված այլ խախտումները՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

(390-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-143-Լ)

Հոդված 391. Անգործությունը կամ հանցավոր հրաման արձակելը զինված ընդհարման ժամանակ

1. Չինված ընդհարման ժամանակ պետի կամ պաշտոնատար անձի կողմից, իր լիազորությունների սահմաններում, բոլոր հնարավոր միջոցները չձեռնարկելը՝ ենթակայի կողմից սույն օրենսգրքի 387-րդ և 390-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունները կանխելու համար, եթե նա իմացել կամ իր տրամադրության տակ տեղեկություն է ունեցել, որը պետք է նրան տվյալ իրադրությունում թույլ տար եզրակացնել, որ իր ենթական կատարում կամ մտադրվում է կատարել նման խախտում, և եթե իր իրավասության սահմաններում նա չի ձեռնարկել գործնականորեն բոլոր հնարավոր միջոցները՝ այդպիսի խախտումը թույլ չտալու կամ այն կանխելու համար՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է անգողշությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Չինված ընդհարման ժամանակ պետի կամ պաշտոնատար անձի կողմից իր ենթակային՝ ոչ մեկին ողջ չթողնելու կամ ակնհայտ հանցավոր այլ հրաման կամ կարգադրություն տալը, որն ուղղված է սույն օրենսգրքի 387-րդ և 390-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների կատարմանը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 392. Մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները

Արտաքսումը, ապօրինաբար կալանքի տակ պահելը, ստրկացնելը, առանց դատի զանգվածային և պարբերական մահապատիժներ կիրառելը, մարդկանց առևանգելը, ինչին հետևում է նրանց անհետանալը, խոշտանգելը կամ դաժան գործողությունները, որոնք կատարվում են ըստ քաղաքացիական բնակչության ռասայական, ազգային, էթնիկական պատկանելության, քաղաքական հայացքների և դավանանքի՝

պատժվում են ազատազրկմամբ՝ տասից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

(392-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-143-Ն)

Հոդված 393. Ցեղասպանությունը (վերնագիրը փոփ. 05.12.06 ՀՕ-256-Ն)

Ցեղասպանությունը, այսինքն՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, մասնաձևությանը խոչընդոտելը, երեխաներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի հանձնելը, բռնությամբ վերաբնակեցնելը կամ այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելը՝

պատժվում են ազատազրկմամբ՝ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

(393-րդ հոդվածը փոփ. 05.12.06 ՀՕ-256-Ն, 23.05.11 ՀՕ-143-Ն)

Հոդված 394. Էկոցիդը

Բուսական կամ կենդանական աշխարհը դիտավորությամբ զանգվածաբար ոչնչացնելը, մթնոլորտը, հողերը կամ ջրային պաշարները թունավորելը, ինչպես նաև Էկոլոգիական աղետ առաջացրած այլ արարքներ կատարելը՝

պատժվում են ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 395. Վարձկանությունը

1. Վարձկան հավաքագրելը, ուսուցանելը, ֆինանսավորելը կամ այլ ձևով նյութապես ապահովելը, ինչպես նաև զինված ընդհարումներում կամ ռազմական գործողություններում նրան օգտագործելը՝

պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) ակնհայտ անչափահասին ներգրավելով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով:

3. Վարձկանի մասնակցությունը զինված ընդհարումներին կամ ռազմական գործողություններին՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

4. Վարձկան է համարվում հատուկ հավաքագրված անձը, ով գործում է նյութական հատուցում ստանալու նպատակով և զինված ընդհարմանը կամ ռազմական գործողություններին մասնակցող պետության քաղաքացի չէ, մշտապես չի բնակվում դրա տարածքում, ընդգրկված չէ ընդհարման մեջ գտնվող պետության զինված ուժերի անձնակազմում և այլ պետության կողմից ուղարկված չէ զինված ուժերի կազմում պաշտոնեական պարտականություններ կատարելու համար:

Հոդված 396. Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց կամ հաստատության վրա հարձակվելը

1. Միջազգային պաշտպանությունից օգտվող օտարերկրյա պետության ներկայացուցչի կամ միջազգային կազմակերպության աշխատակցի կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց ծառայողական կամ բնակելի շենքերի կամ տրանսպորտային միջոցների վրա հարձակվելը, եթե այդ գործողությունները կատարվել են պատերազմի պրովոկացիայի կամ միջազգային հարաբերությունները բարդացնելու նպատակներով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները, որոնք անգղուշությամբ առաջացրել են մարդու մահ, առողջությանը ծանր վնաս են պատճառել կամ զուգորդվել են գույք կամ կարևոր փաստաթղթեր ոչնչացնելով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից տասներկու տարի ժամկետով:
(396-րդ հոդվածը լրաց. 09.06.04 ՀՕ-97-Ն)

Հոդված 397. Միջազգային պայմանագրերով պահպանվող տարբերանշաններն ապօրինի օգտագործելը

Ռազմական գործողությունների ժամանակ, հակառակ միջազգային պայմանագրերի, միջազգային իրավունքով և միջազգային պայմանագրերով պահպանվող Կարմիր խաչի, Կարմիր մահիկի կամ մշակութային արժեքների համար նախատեսված պաշտպանիչ նշանները կամ այլ տարբերանշաններն օգտագործելը, կամ հակառակորդի կամ չեզոք պետության պետական դրոշից կամ պետական տարբերանշաններից ապօրինի օգտվելը կամ միջազգային կազմակերպության դրոշից կամ տարբերանշաններից ապօրինի օգտվելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
(397-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 397¹. Ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը

Համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված սույն գլխի մյուս հոդվածներով նախատեսված հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, հավանություն տալը կամ արդարացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:
(397¹-ին հոդվածը լրաց. 05.12.06 ՀՕ-256-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 14

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Գ Լ ՈՒ Խ 34

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Հոդված 398. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելը

Սույն օրենսգիրքը գործողության մեջ է դրվում հատուկ օրենքով:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

2003 թ. ապրիլի 29
Երևան
ՀՕ-528-Ն

Հավելված թիվ 1
Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԶԳԱԼԻ, ԽՈՇՈՐ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱԴՆՍ ԽՈՇՈՐ ԶԱՓԵՐԸ
(վերնագիրը փոփ. 07.12.11 ՀՕ-323-Ն)**

Հ/հ	Անվանումը	Զափերը՝ գրամներով		
		զգալի ...-ից ավելի մինչև ... ներառյալ	խոշոր ...-ից ավելի մինչև ... ներառյալ	առանձ- նապես խոշոր, ավելի քան
Թ Մ Ր Ա Մ Ի Ջ Ո Ց Ն Ե Ր				
1.	Ալիլարոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
2.	Ալֆամեպրոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
3.	Ալֆամեթադոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
4.	Ալֆա-մեթիլֆենտանիլ (հիմքն ու աղերը)	0.00004-0.0002	0.0002-0.001	0.001
5.	Ալֆա-մեթիլթիոֆենտանիլ	0.00004-0.0002	0.0002-0.001	0.001
6.	Ալֆապրոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5

7.	Ալֆացետիլմեթադոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
8.	Ալֆենտանիլ	0.0004-0.002	0.002-0.15	0.15
9.	Ացետիլմեթադոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
10.	Ացետիլ-ալֆա-մեթիլֆենտանիլ	0.00004-0.0002	0.0002-0.001	0.001
11.	Ացետորֆին	0.00005-0.0001	0.0001-0.0005	0.0005
12.	Ամֆետամին (ֆենամին) (հիմքն ու աղերը)	0.01-0.02	0.02-3.0	3.0
13.	Անիլերիդին (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.005-0.01	0.01-0.05	0.05
14.	Ափիոն (այդ թվում՝ բժշկական) անկախ չեզոք լցանյութերի առկայությունից (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.1-0.5	0.5-10.0	10.0
15.	Ափիոն ացետիլացված, այդ թվում՝ ուղեկցող նյութերի առկայությամբ, անկախ դրանց դեղագործական բնութագրից (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.02-0.2	0.2-5.0	5.0
16.	Ափիոն մզվածքային, այդ թվում՝ ուղեկցող նյութերի առկայությամբ, անկախ դրանց դեղագործական բնութագրից (ներառյալ՝ մորֆին, կոդեին, թեբաին, օրիպավին պարունակող ցանկացած տեսակի կակաչի ծղոտի հեղուկ պատրաստուկների՝ հանուկների, եփուկների, ջրաթուրմերի գոլորշացման չոր մնացորդները) (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.1-0.5	0.5-10.0	10.0
17.	Ացետիլկոդեին	0.01-0.1	0.1-1.0	1.0
18.	Ացետիլդիհիդրոկոդեին	0.1-0.5	0.5-2.5	2.5
18.1	Բարբիտալ	0.1-1.0	1.0-10.0	10.0
19.	Բեզիտրամիդ	0.01-0.1	0.1-0.5	0.5
20.	Բետա-հիդրօքսիֆենտանիլ	0.0004-0.002	0.002-0.01	0.01
21.	Բետա-հիդրօքսի - 3-մեթիլֆենտանիլ	0.0004-0.002	0.002-0.01	0.01
22.	Բետամեպրոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
23.	Բետամեթադոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
24.	Բետապրոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
25.	Բետացետիլմեթադոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
26.	Բենզեթիդին	0.01-0.05	0.05-0.25	0.25
27.	Բենզիլմորֆին	0.1-0.5	0.5-2.5	2.5
28.	Բուպրենորֆին (հիմքը և աղերը)	0.002-0.02	0.02-0.2	0.2
29.	Բրուլամֆետամին (ԴՌԲ) (հիմքն ու աղերը)	0.0001-0.001	0.001-0.005	0.005
30.	Դեզոմորֆին՝ անկախ չեզոք նյութերի առկայությունից (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.05-0.5	0.5-2.5	2.5
30.1	Դեմորֆան	0.02-0.2	0.2-10.0	10.0
31.	Դեքստրոմորամիդ	0.002-0.01	0.01-0.05	0.05
31.1	Դեքսամֆետամին	0.01-0.02	0.02-3.0	3.0
32.	Դիամպրոմիդ	0.1-0.5	0.5-2.5	2.5
33.	Դիհիդրոմորֆին՝ անկախ չեզոք նյութերի առկայությունից (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.05-0.5	0.5-2.5	2.5
34.	Դեկստրոպրոպօքսիֆեն (իբուպրոկսիբոլոն, պրոկսիվոն, սպազմոպրոկսիվոն)	0.12-0.6	0.6-3.0	3.0
35.	4-բոմոն-2.5-դեմիթօքսիֆենեթիամին (2C-	0.001-0.01	0.01-0.05	0.05

36.	Բ) N,N-դիէթիլտրիպտամին (ԴԷՏ) (հիմքն ու աղերը)	0.01-0.02	0.02-1.0	1.0
37.	N,N-դիմէթիլտրիպտամին (ԴՍՏ) (հիմքն ու աղերը)	0.01-0.02	0.02-1.0	1.0
38.	Դիէթիլթիամբուտեն	0.1-0.5	0.5-2.5	2.5
39.	ԴՄՀՊ՝ 3-(1.2-դիմէթիլ-հեպտիլ)-1-հիդրօքսի-7,8,9,10-տետրահիդրո-6,6,9-տրիմէթիլ-6-Н-դիբէնզո-{-b,d}- պիրան	0.01-0.02	0.02-1.0	1.0
40.	ԴՄԱ՝ (d)-2.5-դիմէթօքսի-ալֆա-մէթիլ ֆենիլ էթիլամին) (հիմքն ու աղերը)	0.01-0.02	0.02-1.0	1.0
41.	ԴՕԷՏ՝ (d)-2.5-դիմէթօքսի-4-էթիլ-ալֆա-մէթիլֆենիլէթիլամին) (հիմքն ու աղերը)	0.0001-0.001	0.001-0.005	0.005
42.	Դիհիդրոկոդէին	0.1-0.5	0.5-2.5	2.5
42.1.	դիհիդրոնետորֆին	0.0001-0.005	0.0005-0.1	0.1
43.	Դիմէնօքսադոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
44.	Դիմէֆէպտանոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
45.	Դիմէպիէպտանոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
46.	Դիմէթիլթիամբուտեն	0.1-0.5	0.5-2.5	2.5
47.	Դիպիպանոն	0.002-0.01	0.01-0.05	0.05
48.	Դիօքսաֆէտիլ բուտիրատ և դրա աղերը	0.02-0.1	0.1-0.5	0.5
49.	Դրոտեբանոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
50.	Էտոնիտազեն և դրա աղերը	0.001-0.01	0.01-0.05	0.05
51.	Էթիլմորֆին	0.01-0.1	0.1-1.0	1.0
52.	Էթիլմէթիլթիանբուտեն	0.1-0.5	0.5-2.5	2.5
53.	Էտիցիկլիդին (հիմքն ու աղերը)	0.001-0.01	0.01-0.05	0.05
54.	N-էթիլ-ՄԴԱ (+)- N-էթիլ-ալֆա-մէթիլ-3,4-(մէթիլէնդիօքսի) ֆենէթիլամին) (N-էթիլ տենամֆէնտամին) (հիմքն ու աղերը)	0.1-0.2	0.2-1.5	1.5
55.	Էկգոնին և դրա բարդ եթերներն ու ածանցյալները, որոնք կարող են փոխակերպվել Էկգոնինի և կոկաինի	0.04-0.2	0.2-1.0	1.0
55.1	Էտրիպտամին	0.001-0.01	0.01-1.0	1.0
56.	Էտօքսերիդին և դրա աղերը	0.1-0.5	0.5-2.5	2.5
57.	Էֆեդրոն, մեթկատինոն (անկախ ուղեկցող նյութերի առկայութեանից)	0.01-0.02	0.02-3.0	3.0
58.	Էտորֆին	0.00001-0.0001	0.0001-0.001	0.001
59.	Թիանէպտին՝ անկախ չեզոք նյութերի առկայութեանից (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.05-0.5	0.5-2.5	2.5
60.	Թիոֆենտանիլ	0.00004-0.0002	0.0002-0.001	0.001
61.	Իզոմէթադոն	0.1-0.5	0.5-2.5	2.5
62.	(+)- Լիզերգիդ (ԼՍԴ, ԼՍԴ-25)	0.0001-0.001	0.001-0.005	0.005
62.1	Լևամֆետամին	0.01-0.02	0.02-3.0	3.0
63.	Լևոմետորֆան	0.1-0.5	0.5-2.5	2.5
64.	Լևոմորամիդ	0.1-0.5	0.5-2.5	2.5
65.	Լևոֆենացիլմորֆան	0.1-0.5	0.5-2.5	2.5
66.	Լևորֆանոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
67.	ԽՏՊ՝ 2-ամինո-1-(2.5-դիմէթօքսի-4-մէթիլ ֆենիլպրոպան)	0.001-0.01	0.01-0.05	0.05
68.	Կատա Էդուլիս (բուսանյութի քանակը որոշվում է 110 աստիճանում մինչև և զանգված չորացումից հետո)	10.0-20.0	20.0-200.0	200.0
69.	Կակաչի ծղոտ (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	10.0-50.0	50.0-200.0	200.0
70.	(կեսն ուժը կորցրել է 20.10.16 ՀՕ-204-Ն)			
71.	Կատինոն	0.01-0.02	0.02-3.0	3.0
72.	Կանեփ՝ բոլոր տեսակների (կանեփի ամբողջական կամ ոչ ամբողջական բույսը՝ կենտրոնական ցողունով, կամ կանեփի բոլոր տերևապատ մասերը՝ առանց	500.0-1000.0	1000.0-10000.0	10000.0

	գազաթային հատվածների, որոնք պարունակում են տետրահիդրոկանսաբիտներ) (քաշը որոշվում է հետազոտման պահին)			
73.	Կոդերմիդոն	0.01-0.1	0.1-0.5	0.5
74.	Կոդեին (հիմքն ու աղերը)	0.02-0.2	0.2-10.0	10.0
75.	Կոկաին (հիմքն ու աղերը, անկախ ուղեկցող նյութերի առկայությունից)	0.001-0.01	0.01-1.0	1.0
76.	Կոկայի տերևներ (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	2.0-20.0	20.0-25.0	25.0
77.	Կոդոքսիմ	0.1-0.5	0.5-2.5	2.5
78.	Հերոին (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից)	0.005-0.01	0.01-0.1	0.1
79.	Հաշիշ (անաշա, կանաբիսի խեժ)	0.2-1.0	1.0-100.0	100.0
80.	Հաշիշի յուղ (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.1-0.5	0.5-10.0	10.0
81.	N - հիդրոքսի մեթինեդիոքսի-ամֆետամին (ՄԴԱ) (+)- N [ալֆա-մեթիլ-3,4-(մեթիլենդիոքսի)ֆենեթիլ] հիդրոքսիլամին	0.1-0.2	0.2-1.5	1.5
82.	Հիդրոկոդոն	0.1-0.5	0.5-2.5	2.5
83.	Հիդրոմորֆինոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
84.	Հիդրոմորֆոն	0.1-0.5	0.5-2.5	2.5
85.	Հիդրոքսիպեթիդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
86.	Մարիխուանա (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.5-5.0	5.0-500.0	500.0
87.	ՄԴՄԱ՝ (dl-3,4-մեթիլենդիոքսի -N - ալֆա-դիմեթիլֆենիլ-էթիլամին) (մեթիլենդիոքսիմեթամֆետամին) (հիմքն ու աղերը)	0.05-0.2	0.2-1.5	1.5
88.	ՄԴՊԴ 1-մեթիլ-4-ֆենիլ-4-պիպերիդինոլի պրոպիլնատ (եթեր)	0.1-0.5	0.5-2.5	2.5
89.	1-մեթիլ-4-ֆենիլպիպերիդին-4-կարբոնաթթու	0.1-0.5	0.5-2.5	2.5
90.	Մեթադոն (հիմքն ու աղերը)	0.1-1.0	1.0-10.0	10.0
91.	Մեթադոնի միջակա միացություն	0.05-0.5	0.5-5.0	5.0
92.	(կեսն ուժը կորցրել է 20.10.16 ՀՕ-204-Ն)			
93.	Մեթիլդեգորֆին՝ անկախ չեզոք նյութերի առկայությունից (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.05-0.5	0.5-5.0	5.0
94.	Մեթիլդիհիդրոմորֆին՝ անկախ չեզոք նյութերի առկայությունից (քանակը որոշվում է՝ +110-115° C ջերմաստիճանի պայմաններում չորացնելով վերջնական քաշը ստանալուց հետո)	0.1-0.5	0.5-2.5	2.5
95.	Մետոպոն	0.01-0.5	0.5-2.5	2.5
96.	Մետազոդին	0.4-2.0	2.0-10.0	10.0
97.	3-մեթիլֆենտանիլ	0.00002-0.0002	0.0002-0.001	0.001
98.	3-մեթիլթիոֆենտանիլ	0.00002-0.0002	0.0002-0.001	0.001
99.	Մեսկալին (հիմքն ու աղերը)	0.015-0.03	0.03-5.0	5.0
100.	Մեթամֆետամին (հիմքն ու աղերը)	0.01-0.02	0.02-1.5	1.5
101.	Միրոֆին	0.1-0.5	0.5-2.5	2.5
102.	Մորամիդի միջակա միացություն	0.1-0.5	0.5-2.5	2.5
103.	Մորֆերիդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
104.	Մորֆին (հիմքն ու աղերը)	0.01-0.1	0.1-1.0	1.0
105.	Մորֆին- N- օքսիդ	0.1-0.5	0.5-2.5	2.5
106.	Մորֆին մեթիլբրոմիդ	0.1-0.5	0.5-2.5	2.5
106.1	Միտրազինին E)-2-[(2S,3S,12bS)-3-էթիլ-8-մեթոքսի-	0.5-2.5	2.5-5	5

	1,2,3,4,6,7,12,12b-օկտահիդրինոլ [2,3-a] քիմիկատ-2-իլ-3-մեթօքսիակրիլաթթվի մեթիլային էսթեր			
107.	ՄՄԴԱ՝ (dl - 5 մեթօքսի-3,4-մեթիլեն-դիօքսի-ալֆա-մեթիլֆենիլ-էթիլամին) (հիմքը և աղերը)	0.1-0.2	0.2-1.5	1.5
108.	Նիկոմորֆին	0.1-0.5	0.5-2.5	2.5
109.	Նիկոկոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
110.	Նիկոդիկոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
110.1	Նոմիֆենզին (Nomifensine) 2-մեթիլ-4-ֆենիլ-1,2,3,4-տետրահիդրօհզոքիմին-8-ամին	0.75-3.75	3.75-7.5	7.5
111.	Նորացիմեթադոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
112.	Նորլեվորֆանոլ	0.1-0.5	0.5-2.5	2.5
113.	Նորկոդենին (N-դեմեթիլկոդենին)	0.1-0.5	0.5-2.5	2.5
114.	Նորմեթադոն	0.1-0.5	0.5-2.5	2.5
115.	Նորմորֆին	0.1-0.5	0.5-2.5	2.5
115.1.	Նորպիպանոն	0.1-0.5	0.5-2.5	2.5
116.	Նօքսիրոն (գլյուտեթիմիդ) (հիմքն ու աղերը)	1.5-3.5	3.5-25.0	25.0
117.	Պենտազոցին	0.05-0.3	0.3-3.0	3.0
118.	Պարահեքսիլ	0.025-0.05	0.05-5.0	5.0
119.	Պարա-ֆլուորոֆենտանիլ	0.00002-0.0002	0.0002-0.001	0.001
120.	ՊԵՊԱՊ (1-ֆենեթիլ-4-ֆենիլ-4-պիպերիդինոլի ացետատ) (եթեր)	0.1-0.5	0.5-2.5	2.5
121.	Պեթիդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
122.	Պեթիդին ինտերմեդիատ A	0.1-0.5	0.5-2.5	2.5
123.	Պեթիդին ինտերմեդիատ B	0.1-0.5	0.5-2.5	2.5
124.	Պեթիդին ինտերմեդիատ G	0.1-0.5	0.5-2.5	2.5
125.	Պիմինոդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
126.	Պիրիտրամիդ	0.007-0.15	0.15-1.5	1.5
127.	Պսիլոցիբին	0.001-0.01	0.01-1.0	1.0
128.	Պսիլոցին	0.001-0.01	0.01-1.0	1.0
129.	Պրոհեպտագին	0.1-0.5	0.5-2.5	2.5
130.	Պրոպերիդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
131.	Պրոպիրամ	0.1-0.5	0.5-2.5	2.5
132.	Սոմբրևին	0.5-5.0	5.0-50.0	50.0
133.	Պրոզիդոլ	0.01-0.1	0.1-1.0	1.0
134.	ՊՄԱ (4-մեթօքսի-ալֆա-մեթիլֆենիլ-էթիլամին) (հիմքն ու աղերը)	0.01-0.02	0.02-1.0	1.0
135.	Ռացեմետորֆան	0.1-0.5	0.5-2.5	2.5
136.	Ռացեմորամիդ	0.1-0.5	0.5-2.5	2.5
137.	Ռացեմորֆան	0.1-0.5	0.5-2.5	2.5
138.	Ռոլիցիկլիդին (ՖՅՊԻ, ՖՊ) (հիմքն ու աղերը)	0.001-0.01	0.01-0.05	0.05
139.	Սուֆենտանիլ	0.00004-0.0002	0.0002-0.001	0.001
140.	Թեբաին	0.02-0.04	0.04-1.0	1.0
141.	Թեբակոն	0.1-0.5	0.5-2.5	2.5
142.	Տետրահիդրոկանսաբինոլներ (բոլոր իզոմերներով)	0.005-0.5	0.5-1.0	1.0
143.	Տենամֆետամին (ՄԴԱ) (մեթիլենդիօքսիամֆետամին) (հիմքն ու աղերը)	0.01-0.02	0.02-1.0	1.0
144.	Տենոցիկլիդին (ՏՅՊ, ՏՄՊ) (հիմքն ու աղերը)	0.001-0.01	0.01-0.05	0.05
145.	Տիլիդին	0.02-0.2	0.2-2.0	2.0
145.1.	ՏՄԱ՝ dl-3,4,5-տրիմեթօքսի-ալֆա-մեթիլֆենիլ-էթիլամին	0.015-0.03	0.03-5.0	5.0
146.	(կեսն ուժը կորցրել է 20.10.16 ՀՕ-204-Ն)			
147.	Տրիմեպերիդին	0.02-0.2	0.2-2.0	2.0
148.	Կլոնիտագեն և դրա աղերը	0.00004-0.0002	0.0002-0.001	0.001
149.	(կեսն ուժը կորցրել է 20.10.16 ՀՕ-204-Ն)			
150.	Օմնոպոն	0.02-0.2	0.2-2.0	2.0
150.1.	Օրիպավին	0.02-0.04	0.04-1.0	1.0
151.	Օքսիկոդոն (14-	0.1-0.5	0.5-2.5	2.5

	հիդրօքսիդի հիդրոկոդի հետ)			
152.	Օքսիմորֆոն (14-հիդրօքսիդի հիդրոմորֆի հետ)	0.1-0.5	0.5-2.5	2.5
153.	Ֆենադօքսոն և դրա աղերը	0.1-0.5	0.5-2.5	2.5
154.	Ֆենամպրոմիդ	0.1-0.5	0.5-2.5	2.5
155.	Ֆենագոցին	0.2-2.0	2.0-10.0	10.0
155.1.	Ֆենատին	0.1-0.5	0.5-2.5	2.5
156.	(կետն ուժը կորցրել է 20.10.16 ՀՕ-204-Ն)			
157.	Ֆենոմորֆան	0.1-0.5	0.5-2.5	2.5
157.1.	Ֆենոպերիդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
158.	Ֆենտանիլ և դրա բոլոր ածանցյալները	0.0001-0.001	0.001-0.01	0.01
159.	Ֆենցիկլիդին (ՖՑԴ) (հիմքն ու աղերը)	0.0001-0.001	0.001-0.005	0.005
160.	Ֆուկոդին (մորֆուլինի էթիլմոնֆին)	0.1-0.5	0.5-2.5	2.5
161.	Ֆուրեթիդին	0.1-0.5	0.5-2.5	2.5
161.1.	7-հիդրօքսիմիտրագինին (E)-2-((2S,3S,7aS,12bS)-3-էթիլ-7 ^a -հիդրօքսի-8-մեթօքսի-1,2,3,4,6,7,7 ^a , 12b-օկտահիդրոինդոլո[2,3-a]քինոլին-2-իլ)-3-մեթօքսիակրիլաթթվի մեթիլային էսթեր	0.5-2.5	2.5-5	5
161.2.	7-Ացետօքսիմիտրագինին Մեթիլ-2-(7 ^a -ացետօքսի-8-մեթօքսի- 3-էթիլ-1,2,3,4,5,6,7, 7 ^a ,12b-օկտահիդրոինդոլո[2,3-a]քինոլին-2-իլ)-3-մեթօքսիակրիլատ	0.5-2.5	2.5-5	5
162.	ACBM-018 N-(ադամանտան-1-իլ)-1-պենտիլ-1H-ինդոլ-3-կարբոնաթթու (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
163.	ACBM(N)-018 N-(ադամանտան-1-իլ)-1-պենտիլ-1H-ինդոլ-3- կարբոնաթթու (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
164.	ACBM-2201 N-(ադամանտան-1-իլ)-1-(5-ֆտորոպենտիլ)-1H-ինդոլ-3- կարբոնաթթու (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
165.	ACBM(N)-2201 N-(ադամանտան-1-իլ)-1-(5-ֆտորոպենտիլ)-1H-ինդոլ-3- կարբոնաթթու (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
166.	AM-1220 (1-(1-մեթիլպիպերիդին-2-իլ)մեթիլ)-1H-ինդոլ-3-իլ)(նաֆթալին-1-իլ)մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
167.	AM-1248 (ադամանտան-1-իլ)-1-[(1-մեթիլպիպերիդին-2-իլ-մեթիլ)-1H-ինդոլ-3-իլ]մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
168.	AM-2201 1-(5-ֆտորոպենտիլ)-3-(նաֆթալին-1-իլ)ինդոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
169.	AM-2233 (1-(1-մեթիլպիպերիդին-2-իլ)մեթիլ)-1H-ինդոլ-3-իլ) (2-յոդֆենիլ)մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
170.	AM-694 1-(5-ֆտորոպենտիլ)-1H-ինդոլ-3-իլ)(2-յոդֆենիլ) մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5

171.	CP 55, 940 (-)-8իս-3-[2-հիդրօքսի-4-(1,1-դիմեթիլիտեպտիլ) ֆենիլ]-տրանս-4-(3-հիդրօքսի-պրոպիլ) ցիկլոհեքսանոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
172.	CP-47,497 2-[(1R,3S)-3-հիդրօքսիցիկլոհեքսիլ]-5-(2-մեթիլօկտան-2-իլ)ֆենոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
173.	(CP 47,497)-C6 2-[(1R,3S)-3-հիդրօքսիցիկլոհեքսիլ]-5-(2-մեթիլիտեպտան-2-իլ)ֆենոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
174.	(CP 47,497)-C9 2-[(1R,3S)-3-հիդրօքսիցիկլոհեքսիլ]-5-(2-մեթիլդեկան-2-իլ)ֆենոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
175.	(CP 47,497)-C8 2-[(1R,3S)-3-հիդրօքսիցիկլոհեքսիլ]-5-(2-մեթիլնոնան-2-իլ)ֆենոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
176.	HU-210 (6aR,10aR)-9-(հիդրօքսիմեթիլ)-6,6-դիմեթիլ-3-(2-մեթիլօկտան-2-իլ)-6a, 7,10,10a-տետրահիդրոբենզո[с]խրոմեն-1-օլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
177.	HU-308 [(1R, 2R, 5R)-2-[2,6-դիմեթօքսի-4-(2-մեթիլօկտան-2-իլ) ֆենիլ] -7,7-դիմեթիլ-4-բիցիկլո [3.1.1] հեպտ-3-էնիլ] մեթանոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
178.	JWH-007 (2-մեթիլ-1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ) (նաֆթալին-1-իլ) մեթանոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
179.	JWH-015 (2-մեթիլ-1-պրոպիլ-1H-ինդոլ-3-իլ) -1-նաֆթալենիլմեթանոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
180.	JWH-018 1-պենտիլ-3-(նաֆթալին-1-իլ) ինդոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
181.	JWH-019 1-հեքսիլ-3-(նաֆթալին-1-իլ)ինդոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
182.	JWH-073 (1-բուրիլ-1H-ինդոլ-3-իլ)(նաֆթալին-1-իլ)մեթանոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
183.	JWH-081 (4-մեթօքսինաֆթալին-1-իլ)(1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ) մեթանոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
184.	JWH-098 (2-մեթիլ-1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ)(4-	0.05-0.25	0.25-0.5	0.5

	մեթօքսիմաֆօալին-1-իլ)մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)			
185.	JWH-116 2-էթիլ-1-պենտիլ-3-(նաֆթալին-1-իլ)ինդոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
186.	JWH-122 (4-մեթիլնաֆթալին-1-իլ)(1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ)մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
187.	JWH-122-F (4-մեթիլնաֆթալին-1-իլ)(1- (5- ֆտորոպենտիլ-1H-ինդոլ-3-իլ) մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
188.	JWH-149 (4-մեթիլնաֆթալին-1-իլ)(2-մեթիլ-1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ) մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
189.	JWH-175 1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ-(նաֆթալին-1-իլ) մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
190.	JWH-176 (E)-1-[1-(նաֆթալին-1-իլմեթիլիդեն)-1H-ինդեն-3-իլ]պենտան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
191.	JWH-182 1-պենտիլ-3-(4-պրոպիլնաֆթալին-1-իլ)ինդոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
192.	JWH-184 1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ-(4-մեթիլնաֆթալին-1-իլ) մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
193.	JWH-185 1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ-(4-մեթօքսիմաֆօալին-1-իլ) մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
194.	JWH-192 (4-մեթիլնաֆթալին-1-իլ)(1-[2-(4-մորֆոլինո)էթիլ]-1H-ինդոլ-3-իլ)մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
195.	JWH-194 2-մեթիլ-1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ-(4-մեթիլնաֆթալին-1-իլ)մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
196.	JWH-195 (1-[2-(4-մորֆոլինո)էթիլ]-1H-ինդոլ-3-իլ) (նաֆթալին-1-իլ)մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
197.	JWH-196 2-մեթիլ-1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ-(նաֆթալին-1-իլ)մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
198.	JWH-197 2-մեթիլ-1-պենտիլ-1H-ինդոլ-3-իլ-(4-	0.05-0.25	0.25-0.5	0.5

	մեթօքսիմաֆֆալին-1-իլ)մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)			
199.	JWH-198 (4-մեթօքսիմաֆֆալին-1-իլ)(1-[2-(4- մորֆոլինո)էթիլ]-1H-ինդոլ-3-իլ մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
200.	JWH-199 (4-մեթօքսիմաֆֆալին-1-իլ)(1-[2-(4- մորֆոլինո)էթիլ]-1H-ինդոլ-3-իլ մեթան (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
201.	JWH-200 (1-[2-(4-մորֆոլինո)էթիլ]-1H-ինդոլ-3-իլ) (նաֆթալին-1-իլ)մեթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
202.	JWH-203 2-(2-քլորոֆենիլ)-1-(1-պենտիլ-1H-ինդոլ-3- իլ)էթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
203.	JWH-206 2-(4-քլորոֆենիլ)-1-(1-պենտիլ-1H-ինդոլ-3- իլ)էթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
204.	JWH-210 1-պենտիլ-3-(4-էթիլնաֆթալին-1-իլ)ինդոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
205.	JWH-234 1-պենտիլ-3-(7-էթիլնաֆթալին-1-իլ)ինդոլ (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
206.	JWH-237 2-(3-քլորոֆենիլ)-1-(1-պենտիլ-1H-ինդոլ-3- իլ)էթանոն (անկախ ուղեկցող նյութերի առկայությունից, ընդհանուր զանգվածով)	0.05-0.25	0.25-0.5	0.5
